



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՉԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱԶԳԱՅԻՆ ՖԵՐԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԵՋ ԽՕՍԵԼՈՎ ԱՇՈՎԵՐՏՆԵՐՈՒՆ

ՀԱՅԵՐԷՆ ՍՈՐՎԵՑԷՔ ՈՒ ԽՕՍԵՑԷՔ, ՈՐՈՎՅԵՏԵՒ ԴՈՒՔ ՊԻՏԻ ԸԼԼԱՔ ՄԵՐ ԼԵԶՈՒԻՆ ՊԱՅԱՊԱՆՆԵՐՆ ՈՒ ՓՐԿՈՂՆԵՐԸ

ՊԱՏԳԱՄԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ազգային Ֆերահեան վարժարանի աշակերտները Երկուշաբթի, 17 Հոկտեմբերի առաւօտուն ծափողջոյններով ու հայկական դրօշակներով դիմաւորեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը, խոր տպաւորութիւն քաղեցին Հայրապետէն ու իրենց կարգապահութեամբ եւ ուշադիր կեցուածքով՝ իրենց կարգին տպաւորեցին Վեհափառ Հայրապետը, արժանանալով անոր գնահատանքին:

Շարունակելով կրթական մեր հաստատութիւններուն իր այցելութեանց շարքը, Վեհափառ Հայրապետը Ֆերահեան վարժարան ժամանեց կէսօրէ առաջ, ընկերակցութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդին: Վարժարանի մուտքին, շքախումբը դիմաւորուեցաւ վարժարանի տնօրէն Տիար Ժան Գոսաքեանի, Կնամակալ մարմինի ատենապետ Տիար Մարք Կետիկեանի, Ուսումնական Մարմինի անդամներու եւ ծնողներու կողմէ: Ներկայ էին հոգեւոր հայրեր, Ազգ. Կեդրոնական Վարչութեան ու Թեմիս Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներ, շրջանի կուսակցական եւ միութենական ներկայացուցիչներ:

Վեհափառին ժամանումէն առաջ իսկ, աշակերտները կարգի կանգնած էին բակին շուրջ բոլորը եւ հայկական Եռագոյններով պատրաստ էին դիմաւորելու Հովուապետը: Խումբ մը աշակերտներ, հայկական տոհմիկ տարազներ հագած՝ ընդառաջ եկան Վեհափառին, որ կատարեց աղ ու հացի օրհնութիւն, ապա, հիւրընկալներուն կողմէ առաջնորդուեցաւ դէպի «Աւետիսեան» սրահ:

Աշակերտ, դաստիարակ, ներկայացուցիչներ ու ծնողք պատմական յիշատակելի պահ մը բոլորեցին Վեհափառ Հայրապետին ներկայութեան: Աշակերտները՝ մանուկ ու պատանի, ուղերձով, արտասանութիւններով ու պարերով գեղեցիկ հանդես մը պատրաստած էին հոգեւոր առաջնորդին համար: Բեմին վրայ կը տարածուէր Մեսրոպեան տառերով հիւսուած մեծ զարդանկար մը, իսկ յառաջամասին կար պաստառ մը, որ կ'ըսէր.-

Ամերիկայի հայկական առաջին վարժարանը կ'ողջունե Արամ Ա. Կաթողիկոսը:

Հանդիսավարը՝ Տիկին Ազատուհի Ղազարեան, հանդես եկաւ ողջոյնի խօսքով. ան նշեց, որ վարժարանին համար այս օրը պատմական է, որովհետեւ աշակերտները առիթը կ'ունենան անձամբ տեսնելու Ս. Աթոռոյս գահակալը, որուն մասին կարդացած ու սորված էին միայն:

Ամերիկեան ու Հայկական Քայլերգները կատարեցին խումբ մը աշակերտներ: Վարժարանին Տնօրէնը, իր կարգին ողջոյնի խօսք մը արտասանելով, անդրադարձաւ Ամերիկայի առաջին հայկական այս վարժարանի վաստակին ու այժմու պատկերին՝ աշակերտներու եւ ուսուցիչներու երեսներով: Ան հաստատեց, որ Ֆերահեան Երկրդ. վարժարանը, Մարի Գապայեան նախակրթարանն ու Աշխէն Փիլաւճեան Մանկամտօրը կ'ողջունեն Վեհափառ Հայրապետին այս այցելութիւնը եւ կը հաւաստեն, որ պիտի մնան հայեցի դաստիարակութեան օճախ: Ան անդրադարձաւ նաեւ Վեհափառ Հայրապետի հովուապետական այցելութեան նպատակներուն, եւ աշակերտներուն ուշադրութեան յանձնեց, թէ կրօնական առաջնորդ մը ըլլալու կողքին՝ Հայրապետը է նաեւ Հայ Դատի պաշտպան ու յառաջապահ, հայրենի ժողովուրդին իրաւունքներուն պաշտպան:

Իր խօսքի աւարտին, Տիար Ժ. Գոսաքեան յայտնեց, թէ անականկալ մը ունի Վեհափառին, զոր պիտի ներկայացնեն եօթը աշակերտներ: Ան ցոյց տուաւ հայկական հին ձեռագիր մը, որ արձանագրուած է թուղթ երկար երիզի մը վրայ, կը բովանդակէ գեղեցիկ զարդանկարներ, մանրանկարչական արուեստի նմուշներ եւ «Հաւատով Խոստովանիմ» աղօթքը: 1826ին արձանագրուած ձեռագիրը ունի թանգարանային արժէք, անցեալին տրամադրուած էր դպրոցին, իսկ անոր յարմարագոյն վայրն է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թանգարանը: Աշակերտներ եօթը համար կարդացին աղօթքէն, ապա, թանկագին ձեռագիրը յանձնեցին Վեհափառ Հայրապետին:

Սրտի խօսք ըսելու եւ Վեհափառ Հայրապետը ներկայացնելու հրաւիրուեցաւ Առաջնորդ Սրբազանը: Ան նկատել տուաւ, որ Հայրապետը այս պահուն կը գտնուի սրտամօտ վայր մը՝ հայ վարժարանի յարկին տակ ու հայ աշակերտներու, դաստիարակներու հետ: Ան յայտնեց, թէ Վեհափառը առիթներ ունեցաւ ըլլալու մեր եկեղեցիներու, դպրոցներու յարկին տակ, հանդիպումներ ունեցաւ մեր ժողովուրդին հետ, իսկ այսօր, իր ներկայութեամբ՝ կը խրախուսէ հայկական կրթօճախն ու անոր նուիրեալ ծառայողները: Ան հրաւիրեց Վեհափառը, որպէսզի ուղղէ իր պատգամը:

Վեհափառ Հայրապետը առաջին հերթին յայտարարեց, թէ խորապէս տպաւորուած է աշակերտներուն կարգապահ ներկայութենէն, որովհետեւ նկատած էր, որ սրահը լեցնող մանուկներն ու պատանիները անաղմուկ ու հետաքրքրութեամբ հետեւած էին յայտագիրին: Ան այս պատկերը նկատեց հայկական կրթօճախի հիմնական յատկանիշներէն մէկը, որովհետեւ, ըսաւ ան, այլ դպրոցներու մէջ տիրապետողը կ'ըլլան աղմուկն ու անկարգապահութիւնը: Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ Հայ Դպրոցը ահաւասիկ այսպէս է որ նկարագիր կը կերտէ, հայ մանուկին ու պատանիին

կը ներշնչէ հայեցիութիւն. աշակերտը նկարագիր կը կերտէ այս յարկին տակ եւ կը կազմաւորէ ինքնութիւն:

Վեհափառ Հայրապետը յատուկ գնահատանքով դրուատեց հայ ուսուցիչները, եւ աշակերտներէն մէկու երգին բառերը մէջբերելով՝ նկատել տուաւ, որ հայ ուսուցիչը «երկրորդ ծնող» է աշակերտին համար, նոյնքան կարեւոր դեր ունի անոր հոգեմտաւոր աճին մէջ, որքան ծնողները: «Դպրոցը ընտանիք է, Դպրոցը Հայաստան է ու եկեղեցի, ու անոր առաքելութեան մէջ ուսուցիչը ունի հիմնական դեր», շեշտեց Վեհափառ Հայրապետը, եւ խօսքը աշակերտներուն ուղղելով՝ յորդորեց զանոնք, որ սորվին հայերէն, խօսին հայերէն ու պահպանեն մեր լեզուի ու մշակոյթի ժառանգութիւնները, որովհետեւ «դուք պիտի ըլլաք հայերէնը փրկողը, իսկ վաղը, երբ մեծնաք, պիտի ստանձնէք պատասխանատու դիրքեր՝ մեր ազգային կեանքին մէջ»:

Այլ աշակերտի մը արտասանած բանաստեղծութենէն մէջբերումով մը՝ Վեհափառ Հայրապետը յիշեցուց, որ Հայ Լեզուն հայուն համար տուն է, որ մեզ կը պաշտպանէ փոթորիկներէ:

Վերջապէս, Վեհափառ Հայրապետը գնահատանք արձանագրեց վարժարանի տնօրէնութեան, դաստիարակներուն, անձնակազմին ու հոգատարներուն, Առաջնորդ Սրբազանին, Ազգ. Վարչութեան ու յարակից մարմիններուն, որոնց հոգածութեամբ՝ այս վարժարանը կը շարունակէ իր առաքելութիւնը: Ան աղօթք բարձրացուց առ Աստուած, որպէսզի կենսունակութիւն պարգեւէ վարժարանին ու օրինէ աշակերտներուն ջանասիրութիւնը:

Հանդիպումը վերջ գտաւ Վեհափառ Հայրապետին «Պահպանիչ»ով, որմէ ետք, տնօրէնութեան կողմէ պատշաճ հիւրասիրութիւն մը տեղի ունեցաւ ուսուցչարանին մէջ:

HIS HOLINESS CATHOLICOS ARAM I VISITS FERRAHIAN SCHOOL

On the morning of Monday, October 17, 2011, His Holiness Catholicos Aram I arrived at Ferrahian School where he was met with great applause by students waving Armenian flags who had gathered in the courtyard to welcome the Pontiff to their school.

His Holiness, accompanied by the H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, was welcomed to the school by Principal John Kossakian, Board of Regents members Mr. Mark Gedikian, school board members and parents. In attendance were Clergy, Central Executive and Executive Council members, and representatives of local sister organizations.

After the traditional blessing of salt and bread, His Holiness proceeded to "Avedissian" Hall for a cultural program which consisted of recitations, songs, and dance by the students.

Master of Ceremonies Mrs. Azadouhi Ghazarian welcomed the guests and stated that the day was a historic one as the students granted the opportunity to see His Holiness in person for the first time.

Principal Kossakian welcomed His Holiness to the first Armenian School in America, and affirmed that Ferrahian High, Marie Cabayan Elementary, and Ashkhen Pilavjian Pre-Schools would remain beacons of Armenian education. Addressing the students, the Principal brought to their attention that aside from being the spiritual leader, His Holiness is also a champion of the Armenian Cause and a staunch defender of the rights of the Armenian people. In conclusion, the Principal announced that he had a surprise for His Holiness, a hand-written museum quality document from 1826 which had Armenian drawings and the "I confess with faith" prayer written on it. It had been donated to the school some time ago but the Principal announced that the most appropriate home for it is the Museum of the Catholicosate of Cilicia. Students read seven verses from the prayer, then presented the document to His Holiness. The Prelate was then invited to deliver his remarks.

The Prelate noted that at that moment, His Holiness was at a place that was very dear to his heart, the Armenian School surrounded by Armenian students and teachers, and invited His Holiness to deliver his message.

His Holiness first noted that he was impressed by how quietly and interestedly the students were following the program, saying that it was yet another positive quality of the Armenian School, a place where character and Armenian identity built. His Holiness commended the teachers, calling them "second parents" who have just as important a role as parents do. Addressing the students, His Holiness urged them to learn Armenian, speak Armenian, and preserve our language and culture for in a few years they will be the leaders of our community. In conclusion, His Holiness commended the Principal, faculty, and all affiliated bodies who help the school fulfill its mission, and prayed for the Lord to bless the students and grant success to the school.

The program came to a close with the benediction by His Holiness, after which a reception was held in the faculty room in honor of the Pontiff.